ԿԱՊԱՆԻ
Բժշկական Կենտրոն

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
«Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ

РА СЮНИКИ МАРЗ ЗАО «КАПАНИ БЖШКАКАН КЕНТРОН»
RA MARZ OF SYUNIK «KAPANI BGSHKAKAN KENTRON» CJSC

ՀՀ Սյունիքի մարզ, ք. Կապան, Մ. Ստեփանյան փող. 13
РА Сюникский марз, г. Капан, ул. М. Степаняна 13
13 Melik Stepanyan str., Kapan, Syunik Marz, Republic of Armenia

հեռ. / tel.: +374 285 52992
էլ. փոստ / e-mail: kapanmedical@bk.ru

N 05/286
20 հունիս 2024թ.

«ԱԳԱՍՏ»ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ
ԳՈՀԱՐ ՄՈՒՐԱԴՅԱՆԻՆ

ԾԱՆՈՒՑՈՒՄ
Պայմանագիրը միակողմանի մասնակի լուծման մասին

«Կապանի բժշկական կենտրոն»ՓԲԸ-ի և «Ագաստ»ՍՊԸ-ի միջև 12/01/2024թ. կնքված № ՍՄԿԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/04.12 պայմանագրի շրջանակներում «Ագաստ» ՍՊԸ-ին 30.05.2024 թ-ին պատվեր-հայտ է ներկայացվել № 21; 22; 79 և 80 չափաբաժինների համար, որոնք չեն մատակարարվել:

Պայմանագրի համաձայն ապրանքը պետք է մատկարարվի Պատվիրատուից պատվերը ստանալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացում, սակայն մինչ օրս պատվերը չի մատակարարվել:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը:

Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետի համաձայն Վաճառողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

«Կապանի բժշկական կենտրոն»ՓԲԸ-ի «Ագաստ»ՍՊԸ-ին ներկայացված 13.06.2024թ. № 05/276 գրությամբ, առաջնորդվելով № ՍՄԿԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/04.12 պայմանագրի 2.1.5 կետով, Ձեզ տրամադրվել է ևս (երեք) աշխատանքային օր՝պատվերի կատարման համար: Սակայն մինչ օրս ոչ մի ապրանք չի մատակարարվել:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի № 526-Ն որոշման 33-րդ կետի 17-րդ ենթակետը և Պայմանագրի 8.9-րդ կետը՝ «Կապանի բժշկական կենտրոն»ՓԲԸ-ն 2024թ. հունիսի 20-ից միակողմանի մասնակի լուծում է 12/01/2024թ. կնքված № ՍՄԿԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/04.12 Պայմանագիրը № 21; 22; 79 և 80 չափաբաժինների՝ չմատակարարված ապրանքների մասով:

«Գնումների մասին»ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտվել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է Պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետու չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ եթե սույն ծանուցումը ստանալուց հետո հինգօրյա ժամկետում Ձեր կողմից վճարվի պայմանագրի կատարման ապահովման և որակավորման ապահովման գումարները նշված չափաբաժինների մասով, ապա «ԱԳԱՍՏ»ՍՊԸ-ն չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Տնօրեն՝ Ա.Բ.Խաչատրյան